

I. ՈԼՈՐՏԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ), համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով սահմանված պահանջների, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2005թ. աշխատանքային գործունեությունը ծավալել է ըստ «2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (հետայսու՝ Ծրագիր):

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է: Պետական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է **Եռամյա Ծրագիր**, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար՝ **Տարեկան Ծրագիր**:

Ծրագիրը սահմանում է ՀՀ ԱՎԾ, ինչպես նաև մյուս պետական մարմինների և այլ կազմակերպությունների՝ ՀՀ ԱՎԾ կողմից ընդհանուր համակարգման միջոցով իրականացվող պետական վիճակագրական հաշվառման մեջ ընդգրկված ցուցանիշների (և դրանց հաշվարկման, մշակման, ամփոփման, հրապարակման աշխատանքների) ցանկը, ինչպես նաև դրանց հաշվառման կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները կառուցվում են այնպես, որպեսզի ապահովվի երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովվեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Ծրագիրը մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա, քանի որ երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումները, տնտեսությունում տեղի ունեցող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացրել վիճակագրական տեղեկատվություն սպառողներին (օգտագործողներին) ապահովելու առավել ամբողջական, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական հրապարակումներով:

Հայաստանի պաշտոնական վիճակագրության բոլոր գործառույթների ծրագրավորումը խարսխվում է պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների (ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝

14.04.94թ) և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների ու ստանդարտների վրա:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից մեկը սպառողներին (օգտագործողներին), շուկայի պահանջարկին համապատասխանող, վիճակագրական արտադրանք տրամադրելն է:

Արդի հասարակությունում վիճակագրության առանձնահատկությունը բնութագրվում է այլ ոլորտների նկատմամբ տեղեկատվության ոլորտի առաջանցիկ զարգացման պահանջով, հետևաբար և՛ տեղեկատվական գործունեության և համակարգերի առաջանցիկ արժեքավորմամբ (թանկացմամբ): Վիճակագրության առանձնահատկությունը բնութագրվում է նաև հասարակության լայն զանգվածների և հանրային կյանքի մնացյալ բոլոր սուբյեկտների հետ առնչվող տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի մշտական աճով:

Պետական վիճակագրությունը հիմնականում իրականացվում և համակարգվում է ՀՀ ԱՎԾ կողմից: Այն իրավական տեսանկյունով միասնական համակարգ է, կազմակերպական տեսանկյունով՝ երկաստիճան, իսկ վարչատարածքային բաժանման (կամ տեղեկատվության հավաքագրման) տեսանկյունով՝ եռաստիճան (ներառյալ՝ առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող 11 մարզային գործակալություններն իրենց տարածքային միավորներով):

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ամսական զեկույցներում, այլ վիճակագրական և վերլուծական հրապարակումներում չեն արտացոլվել սկզբնական վիճակագրական տեղեկություն ներկայացնողների վերլուծական անվանական տեղեկությունները, բացառությամբ սկզբնական վիճակագրական տեղեկություն ներկայացնողների կողմից մինչ վիճակագրության պետական լիազոր մարմնին վիճակագրական բնույթի տեղեկություն ներկայացնելն ինքնուրույնաբար կամ այլ կերպ հրապարակվածների և (կամ) դրանց հետ համաձայնեցվածների: